ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

ՀՀ ՏԿԵՆ կարիքների համար **«ՏԿԵՆ-ՄԱԾՁԲ-25/6»** ծածկագրով, **արխիվացման ծառայությունների** ձեռք բերման գնման ընթացակարգի պատասխանատու ստորաբաժանման/ գնահատող հանձնաժողովի/ նիստի

ք. Երևան ***19 մարտի 2025թ.***
ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝
Պատասխանատու ստորաբաժանման/ գնահատող հանձնաժողովի ղեկավար՝
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության քարտուղարության պետ — Վ. Հարությունյան

Գնման ընթացակարգի համակարգող/հանձնաժողովի քարտուղար՝
Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գնումների համակարգման և կազմատնտեսական վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ — Լ. Աբովյան

1. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ապրանքներիգների վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայության գինը /գնվելիք ծառայության ձեռքբերման համար գնման հայտով սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարը/՝ մեկ թվով արտահայտված

Չափաբաժնի			***Չափաբաժնի անվանումը***
համարը	**Ծառայությունների ձեռք բերման համար նախատեսված առավելագույն գինը /ՀՀ դրամ/**	**Գնման առարկայի միավորի առավելագույն գինը /ՀՀ դրամ/**	
1	500 000 /հինգ հարյուր հազար/	1 200 /մեկ հազար երկու հարյուր/	**Արխիվացման ծառայություններ**

2. Տեղեկություն՝ հայտ ներկայացրած մասնակցի վերաբերյալ

2.1 Հայտերի ներկայացման վերջնաժամկետին **«ՏԿԵՆ-ՄԱԾՁԲ-24/8»** ծածկագրով մեկ անձ գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակներում հայտ է ներկայացրել 1 մասնակից:

N	**Մասնակցի անվանումը**	**Գործունեության հասցեն**	**ՀՎՀՀ**	**Էլեկտրոնային հասցե**
1	«Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ	ՀՀ ք. Երևան, Հր. Քոչարի 5/2	00078217	info@armarchive.am

3. Տվյալներ՝ Ընթացակարգի մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի վերաբերյալ

3.1 «Գնումների մասին» օրենքի և Ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ ներկայացրած մասնակցի առաջարկած գնի վերաբերյալ

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Մասնակցի անվանումը	**Արժեք** (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) **/տառերով և թվերով/**	**ԱԱՀ** /տառերով և թվերով/**	**Ընդհանուր գինը /տառերով և թվերով/**
1	Արխիվացման ծառայություններ	«Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ	1000 /մեկ հազար/	200 / երկու հարյուր/	1 200 /մեկ հազար երկու հարյուր/

3.2 Մասնակցի գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը /հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունը համապատասխանում են /ճիշտ են/:

4. Ընթացակարգի արդյունքների հաստատման (արդյունքների ամփոփման) մասին:

Պատասխանատու ստորաբաժանում/գնահատող հանձնաժողովը/ որոշեց՝

4.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 34-րդ հոդվածի պահանջները՝
ա) «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար:
բ) Ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել **«Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ին:**

4.2 Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

4.3 Հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասը՝ անգործության ժամկետ չսահմանել:

4.4 Ընթացակարգի ընտրված մասնակցին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ՝ հաշվի առնելով «Գնումների մասին» օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջները:

Պատասխանատու ստորաբաժանման/ գնահատող հանձնաժողովի

ղեկավար՝ **Վ. Հարությունյան** .....

Գնման ընթացակարգի համակարգող /հանձնաժողովի քարտուղար՝ **Լ. Աբովյան** .....